**832. ԽԱՉՔԱՐ,** *մեծ, պատվանդանով միասին ընկած է գերեզմանատան մեջ. քիվին, խաչի թևերի շուրջը և հարավային կողին 9 տող.*

ԵՍԱՐԳԻՍԵՐԷՑ · · · · · · · · Մ̅Ի̅Ն̅
ԲԱԷԻՍԷԳԻԼԻՆ ԳՈՅԼԻՆ ՀՈԳՈ-Ն

ԽԱ | ՆՈՒՄ
ԻՆ.

ԴԱԼ
ՊԷԿԻՆ
ՔԱՂԱՔ
ԻՆ
ՌԱ.

Ե(Ս) ՍԱՐԳԻՍ ԷՐԷՑ [ԿԱՆԳՆԵՑԻ]
Մ̅Ի̅. Խ(Ա)Չ(Ս) ԲԱ(Ր)ԷԽ(ԱԻ)Ս Է
ԳԻ(Լ)ԻՆԳՈՑԼԻՆ ՀՈԳՈՒՆ: ԽԱ-
ՆՈՒՄ[Ի]Ն. ԴԱ(Լ) ՊԷԿԻՆ(,) ՔԱ-
Ղ(Ա)Ք[Ի]Ն ՌԱ · · · ·

Ծանոթ. *Վերջին տառերը հնարավոր է թվական համարել՝ :ՌԱ: (1552)։*

## 88. ԳԵՏԱՇԵՆ—ՉԱՅՔԵՆԴ ԳՑՈՒՂ.

*Նրբեմնի մելիքանիստ այս գյուղը գտնվում է Կարակ չոլ գետի ափին, ձորի մեջ։ Այս մեծ գյուղում կան հետևյալ արձանագիր հուշարձանները.*

*Ա.* Գերեզմանատուն. *գտնվում է գյուղից արևմուտք, հարթության վրա. շատ ընդարձակ է. այստեղ կան բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր և կենցաղային քանդակներ ունեցող տապանաքարեր։ Դրանցից ամենահինը 1550 թվականից է։*

*Բ.* Անապատ. *գտնվում է գյուղի վերին եզրին, գետի ձախ ափին. թաղածածկ շենք է։*

*Գ.* Նահատակի մատուռ կամ ավագ սբ. Նշան. *գտնվում է գյուղի ստորին եզրին. փոքրիկ մատուռ է, որի բեմի տակ դամբարան կա, ուր «Նահատակի» գերեզմանն է։*

*Այս մատուռի մեջ անցյալում եղել են չորս ձեռագիր ավետարան և մի քանի մասունքներ, որոնցից Եղիշե առաքյալի արծաթյա աջի վրա՝*

Այս է աջ սրբոյն Եղիշէի առաքելոյն. աշխատողքս, որ այս է Իգնատիոս եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կոֆայու յիշատակ սորա. տէր Ոսկան եպիսկոպոս:

Կամաւն Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս եղոյ նորոգեցի. Աստուած ողորմի ասացէք:

Կամաւն Աստուծոյ Մուրատս, որդի Նիազի շինեցի սուրբ աջս, Աստուած ողորմի ասացեք. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին. թվն. :ՌԿԸ: էր (1619)[1]:

*Դ.* Եղնասար վանք. *գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու. կոչվել է Եղիշե առաքյալի անունով. շինված է սրբատաշ քարերով։ Այժմ մնում են պատերի կեսերը և մի քանի այլ շենքերի ավերակներ։*

*Այստեղից վերև, անտառապատ ձորերի մեջ կան երկու-երեք այլ կիսավեր եկեղեցիներ։*

*Գյուղամիջում կանգուն է սբ. Աստվածածին եկեղեցին և Մելիք-Մնացականյանների ապարանքը։*

*Գյուղից և շրջակայքից հավաքել ենք 25 արձանագրություն, որոնցից 16-ը հրատարակվում են առաջին անգամ։*

### ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**833. ԽԱՉՔԱՐԵՐ,** *երկու հատ, գեղաքանդակ և մեծ, կանգնած են իրար կից մի պատվանդանի վրա. դիմացները անարձանագիր մեծ տապանաքարեր։*

Ա. Հարավայինի քիվին և ստորին մասում 7 տող.

[1] Ջալալեանց, I, 172, Բարխուդարեանց, 264, Լալաեան, V, 319.

ԵՍԷտԳարաՂէՍ
խՍարդՎառիՋՂարայպաղնն
կամայ



····ՂՋՂԹ
··էնազարիէՀիւրԲ̄
··բաւրողնողորմի
ասաց էք

ԵՍ ԷՏԳԱՐ ԱՂԷՍ| ԽՍ. ԱՐԴՈՎ ԱՌԻ ՋՂԱՐԱՑՊԱՂ. ...| ԿԱՄԱՑ|. . . . ⌈ԹՎԻՆ⌉ :ՋՂԹ: (1550). . . . ԱԶԱՐԻԷՆ ԻՒՐ :Բ̄: |⌈ԵՂ⌉ԲԱՒՐՈՎՆ. ՈՂՈՐՄԻ| ԱՍԱՑԷՔ:

Ծանոթ. *Խաչքարի վրա հեծյալ է՝ ձեռքին վահան և նիզակ, սրածայր սաղավարտով, դիմացը սպանված կենդանի։*

Հրատ. *Բարխուդարեանց, 266 (բոլորովին աղավաղված)։*

**834.** Բ. Հյուսիսայինի՝ հյուսիսային կողին. 10 տող.

ԵՍպապ
աճան
աղայԵ
Սկանգ
ՆԵՑՈՒՑ
իՁխջՍ
իՇատ
ակինձ
և ԵՂԲ
արցիմ

ԵՍ ՊԱՊ|ԱՃԱՆ| ԱՂԱՑԵ|Ս ԿԱՆԳ|ՆԵՑՈՒՑ|Ի ՁԽ͜Ա͜ՋՍ ԻՇԱՏ|ԱԿ ԻՆՁ| ԵՒ ԵՂԲ|ԱՐՑ ԻՄ:

Ծանոթ. *ԱՂԱՑԵՍ բառը միացնում ենք, համանական համարելով ԱՂԱՑՍ=ԱՂԷՍ ձևի սխալ դրչությունը։*

*Ժամանակով շատ մոտ պետք է լինի նախորդին, որովհետև նույն հուշարձանի մասն է կազմում և նույն վարպետի ձեռքի աշխատանքն է։*

**835.** ***ԽԱՉՔԱՐԵՐ***, *երկու հատ, մեծ և գեղաքանդակ. կանգնած են իրար կից մի պատվանդանի վրա, նախորդների շարքում, նրանցից մոտ 20 մետր հարավ.*

Ա. Հյուսիսայինի ճակատին և շրջանակին 5 տող.

ԵՍ էտկարաղէսկանկՕեցուցի
ԵՍմԵ
·ԱՒՈՐ
ԱՋԱՐ
ԵԱ



ԵՍ ԷՏԿԱՐ ԱՂԷՍ ԿԱՆԿ⌈Ն⌉ԵՑՈՒՑԻ.| ԵՍ Մ⌈Ե⌉Դ.ԱՒՈՐ ԱՋԱՐԵԱ:

Հրատ. *Բարխուդարեանց, 266։*

**836.** Բ. Հարավայինի ճակատին և շրջանակին 4 տող.

խա՛չՍիՂակՀաւրնիմխոնին
ևմաւրնիմոյգու
Լ
ին



ԽԱՉՍ ԻՇ͜ԱՏ͜ԱԿ ՀԱՒՐՆ ԻՄ ԽՈՆԻՆ| ԵՒ ՄԱՒՐՆ ԻՄՈՑ ԳՈՒ|Լ|ԻՆ:

Ծանոթ. *Բարխուդարյանցն ունի նաև՝ թվ. :ՃՂԱ: Մենք չենք նկատել, եթե ճիշտ է, պետք է ուղղել :ՋՂԱ:, որովհետև նախորդների մեջ* էտկար անուն *այդ թվականներից է։*

Հրատ. *Բարխուդարեանց, 266։*

837. *ԽԱՉՔԱՐԵՐ*, *երկու հատ, մեծ և գեղաքանդակ, կանգնած են եղել մի պատվանդանի վրա. մեկն այժմ կործվել է, մյուսի քիվին 1 տող.*

ԽՀՕՆԱՑԱՐԻՆ  ԽԱՉ[Ս] ՆԱՉԱՐԻՆ:

838. *ԽԱՉՔԱՐ*, *գեղաքանդակ, գտնվում է նախորդից հյուսիս. Թևերի տակ միայն թվականը.*

Թ | Վ Ռ
Լ

ԹՎ[ԻՆ] :ՌԼ: (1581):

839. *ԽԱՉՔԱՐ*, *նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ԽՀՍ ԹԱՓՈՒԿԿԻՆ  Խ[ԱՉ]Ս ԹԱԳՈՒԿ[Կ]ԻՆ:

840. *ԽԱՉՔԱՐ*, *գտնվում է գերեզմանատան հարավային եզրին, քիվին 1 տող.*

Ա.ԾՄԻՀԷ : ՐՍԽԷՍ : ՅԻՇՈՂՍ · ·  Ա.Ծ. ՅԻՇԷ. :ՐԱԽԷՍ: ՅԻՇՈՂՍ.

Ծանոթ. *Երրորդ բառը չենք հասկանում. առնված է կետերի մեջ, հավանաբար սղված է։*

841. *ՏԱՊԱՆԱՔԱՐ*, *գտնվում է նախորդ խաչքարի մոտ. հյուսիսային կողին խաչեր և երկու մարդկային քանդակներ. վերևում 1 տող.*

Ս · ԽՀՍ ԲԱՐԷԽ · · ԳՐԻԳՈՐԻՍ ԹՎ.Ռ·ՀԶ.
ԷՀԴԻ
պար

Ս[ՈՒՐ]Բ. Խ[ԱՉ]Ս ԲԱՐԷԽ[Ա]Ս[Ի] ԳՐԻԳՈՐԻՍ. ԹՎ[ԻՆ]. :ՌՀԶ: (1627)· ԷՀԴԻՊԱՐ. ԳՈՒ[Լ]Յ[ՈՒ]Յ[Ն]:

842. *ԽԱՉՔԱՐ*, *գտնվում է գերեզմանատան հյուսիսային եզրին. ստորին մասում երեք մարդու քանդակ՝ ձեռքերին դավ և ըլիթներ. Թևերի շուրջը միայն թվականը.*

Թ Վ[Ր]Ի
Լ

ԹՎ[ԻՆ] :ՌԼ: (1581):

843. *ՏԱՊԱՆԱՔԱՐ*, *նախորդի մոտ, երեսին կենցաղային տեսարան և միայն թվականը.*

ԹՎՌԼԲ  ԹՎ[ԻՆ] :ՌԼԲ: (1583):

844. *ՏԱՊԱՆԱՔԱՐ*, *օրորոցաձև, նախորդին մոտիկ, հյուսիսային կողին թամքած ձի, ձեռքին գավ բռնած մարդ և արհեստավորական բազմաթիվ գործիքների քանդակներ, շրջանակին 4 տող.*



ԽԱ[Չ]Ս ԲԱՐԷԽԱԻՍ| ՄԷԼԻՔՃԱՆԻՆ Է. ՆԱԼԻՆ. ԹՎ[ԻՆ] :ՌԼԷ: (1588):

845. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հարավային կողին նվազածու և պարող. շրջանակին և արևմտյան ճակատին 3 տող.*



ԱՅՍ Է Հ[Ա]ՆԳԻՍՏ ԷՐԷՎԱՆՑԻ Գ[Ա]Լ[Ո]Ի]ՍՏԻ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԻՆ. ԹՎ[ԻՆ] :ՌՂԲ: (1643):

846. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, թամքաձև, հարավային երեսին հեծյալ՝ սուրը ձեռքին, սանձից բռնած պատանի. պարող՝ մի ձեռքին գավ, մյուսին՝ բլիթ, երկու այլ մարդ, շրջանակներին 5 տող.*



Ս[ՈՒ]ՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ|ԽՈՍ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՆԱՆԱԻՆ, ՈՐԴԻ| ԵԱՎՐԻՆ, ՑԱՐՈՒ[Թ]ԻՒՆԻՆ]. |ԹՎ[ԻՆ] :ՌՃԱ: (1652): |ԻՇԵՑԷՔ ԱՆԱՐԺԱՆ ՑՈՀԱՆ ԿԱԶՄՈՂ:

Ծանոթ. *Կազմող բառի վերջին երկու տառն անցել է արևելյան ճակատի վրա:*

847. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային երեսին խոյաններ և խաչեր, շրջանակներին 5 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՅԵՏԿԱՐԻՆ. ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԻԽՈՒՍ. ՀՈԴՈՒՈՆ ՓՐԿՈՒԹԻ. ՅԻՇ|ԱՏԱ[Կ] . . . . . :|ԱՂԱՍԻ ՊԷԿ:| ԹՎ[ԻՆ] :ՌՃԻԲ: (1673):

Ծանոթ. *Քանդակների և գրչության ոճով նույնն է նախորդի հետ, հետևաբար ՑՈՀԱՆ կազմողի ձեռագործն է:*

ԱՆԱՊԱՏ

848. *«ԱՆԱՊԱՏ» կոչված մատուռի հարավային պատին ագուցված խաչքարին և խաչի թևերի շուրջը, կիսաեղծ 2 տող.*

. . . ԹԻՆԻՒՐՆ . . .        . . . . . ՓՐԿՈՒԹԻԼԻՅՆ ԻՒՐՆ . . . . .

ԹՈՒԷ        ԹՎԼԻՆՅ ։ՌԼԷ։ (1588)։

*849. «ԱՆԱՊԱՏԻ» արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրա, արտաքուստ.*

Այս է Մէլիք Թամրազին, որդի Սարուխանին, եսպար Եաւրին. Քապանին Ապավ որդի, որդի Մէլf Օսէփին Վկլուխոյ պէճէզ Սարգսին. պէճէզ։

Ծանոթ. *Արձանագրությունն այժմ անղումն է, րայց եկեղեցին բազմիցս կրաշրով սպիտակեցնելու հետևանքով տառերը լցվել են կրով և բոլորովին ծածկվել։ Ինչպես երևում է, հրատարակիչների ժամանակ էս լավ վիճակում չի եղել, այդ պատճառով էլ անկապ է կարդացվում։ Վերցնում ենք Բարխուդարյանցից։*

*Հրատ. Բարխուդարեանց, 264—265։ Լալաեան, V, 319։*

*850. «ԱՆԱՊԱՏԻ» արևմտյան մուտքի խոյակի վրա.*

թվ. ։ՌՃՂԸ։ (1749)։

*Հրատ. Բարխուդարեանց, 265։ Լալաեան, 319։*

ՆԱՀԱՏԱԿԻ ՄԱՏՈՒՌ

*851. «ՆԱՀԱՏԱԿ» (աւագ սբ. Նշան) եկեղեցու հյուսիսային պատի խորշի գլխին տրված խաչքարի վրա. 2 տող.*

ՍԲԽՉՍ | ԲՄԷԽՕՍ

ԹԱՆԳ | ՐՂՈՒԼԻՆ

ՍԲ. ԽԼՍՅՉՍ ԲՍՐԷԽՕՍ Թ ԱՆԳՐՂՈՒԼԻՆ։

*Հրատ. Բարխուդարեանց, 259։*

*852. «ՆԱՀԱՏԱԿԻ» մուտքի կիսակամար ճակատաքարի վրա.*

թվ. ։ՌՃԻՁ։ (1677). կամաւ ամենակալին Աստուծոյ շինեցաւ սուրբ նահատակս ձեռամբ Սի-է-նի և որդուն Քամալ պակն, օգնականութեամբ գեղուս. թագաւորութեան պարսից Շահ Սուլէման. հայրապետութեան Սիմէոնին. յիշատակ Փամին։

Ծանոթ. *Առնում ենք Լալայանից. Բարխուդարյանցն ընթադրում է*—ձեռամբ Սիմեօնի։

*Հրատ. Բարխուդարեանց, 259։ Լալաեան, V, 318—319։*

ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔ

*853. «ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔ» եկեղեցու արևմտյան պատի որմնասյան խոյակի տակ.*



։ՋՁԸ։ (1539)։

**854.** *«ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔ» եկեղեցու մուտքի հյուսիսային կողին 8 տող.*

ԻՀՈՊԵԼԵԱ>
Ն · ԱՋ · · >
ՀԱԻԳԹՈՒ
ՀԱՐՍՄԷԿ · ·
ՏԱՍԻՆԻՏԱՐԷ
ԿՎԵՐՏԱ · ԵՍՆ
ԱԺՆ ՏՐ ՂԱԶ
Ա ԳԻՐԵՑ

:Ի: (20) ՀՈՊԵԼԵԱ|Ն|Է ԱԶԱՏԱՐ|ԱՐԻ :Գ: ԹՈՒԱ|ՀԱ-Մ,Ա,ՐՍ ՄԷԿ · · · |ՏԱՍԻՆ Ի ՏԱՐԷ|Կ ՎԵՐ ՏԱՐ ԵՍ ԱՆ|ԱՐԺԱՆ ՏՐ. ՂԱԶ|ԱՐ ԳԻՐԵՑ,Ի,:

Ծանոթ. *Հրատարակիչները վերծանել են—*ի հոպելիանն Ազատարարի Գ. թուահամարի մեռասան տարեկ վեր տար... *և թվականը նշանակել 1311։ Այս թվականը ոչ մի կերպ չի համարվում ո՛չ շենքի ճարտարապետական և ո՛չ էլ արձանագրության գրչական ու լեզվական առանձնահատկություններին։ Մենք հակված ենք հետևյալ հաշվին. 1000+13+20+551=1584 թ.։*

*Հրատ. Բարխուդարեանց, 265։ Լալաեան, V, 345։*

**855.** *«ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔ» եկեղեցու մուտքի հարավային կողին, 5 տող.*

+ ԹՈՃ
+ԼԵ+
ԵՍՆ · · Վ
ՈՎՆԷՍԵՐ
ԷՑ

ԹՎ,ԻՆ, :ՌՃԼԵ: (1687). ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ՈՎԱՆԷՍ ԵՐԷՑ:

*Հրատ. Բարխուդարեանց, 265 (Ովանէսի փոխարեն Մովսէս)։*

**856.** *«ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔԻ» սենյակներից մեկի ճակատակալ քարին փակագիր և չորս տող.*

ՍԵՆԱԿ ԿԵՐՏԵԼ ՀՐԱՇԱԶԱՆ ՎԵՐՆ
ՅԱԿՕՔ ԵԶԱՆԱԶԱՆ ՍԱԿՍ ՏՐԻՄՈՐ
ՄԲԱԶՆ · ԵԶ ՂԱԶԱՐԻ ԱԾԱԲԱՆ
ԹՎ ՌՃԿԱ



ՍԵՆ,Ե,ԱԿ ԿԵՐՏԵ,Ա,Լ ՀՐԱՇԱԶԱՆ, ՎԵՐ-ՆԱ|ՅԱԿՕՔ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ. ՍԱԿՍ Տ,Ի,-Ր,Ա,ՄՈՐ |ՄՐԲԱԶ,Ա,Ն ԵՒ ԶՂԱԶԱՐԻ Ա,Ս-ՏՈՒԱ,ԾԱԲԱՆ: |ԹՎ,ԻՆ, :ՌՃԿԱ: (1712):

Փակագիրը

ՏՐ. ՂԱԶԱՐ ԾԱՌԱՅ ԱՅ:

Ծանոթ. *«Տիրամոր» հնարավոր է վերծանել «տէր իմո»։*

**857.** *«ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔԻ» մի այլ սենյակի մուտքի ճակատին. փակագիր՝*



ՏՐ ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ԱՅ: